

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ՝ 14,5 ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐ

Հայաստանի Ելեմուտքի նախարար Վահե Յովհաննիսյանը յայտնեց, որ 2025-ին տնտեսական աճը եղած է 7,1 առ հարիւր, իսկ 2021-2025 թուականներում միջինը հասած է 7,9 առ հարիւրի: Ըստ Յովհաննիսյանի, 2025 թուականի 31 դեկտեմբերի դրութեամբ Հայաստանի արտաքին պետական պարտքը կազմած է 14 միլիար 531 միլիոն ամերիկեան տոլար:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՓՈՒՔ ԲՍԱՆՆԵՐՈՒՆ

15 Յունիս 1915-ի արշաւոյսին, հայրենիքի ազատագրութեան զինուորագրեալ քսան ռաիփրաներ, Պոլսոյ մէջ, հայոց պատմութեան փառահեղ էջերէն մին կերտեցին, երբ հաւաքաբար դարձան մատաղները հայրենիքի ազատութեան զոհաշատ բազիլին:

Գաղափարի՝ մարդիկ էին անոնք գերազանցապէս. տեսլականի՝ հաւատացած մարդիկ:

Ազգային-յեղափոխական քուրային մէջ թրծուած անձնորդ զինուորեալներ, ի տես իթթիհատակասներու որոճացող նկրտումներուն, խիզախաբար յանձն առած էին



չեզոքացնել անոնց պարագլուխները՝ կանխելու համար հայոց ցեղասպանութեան վերահաս սպառնալիքը: Հնչակեան կուսակցութեան 7-րդ համագումարը այդ վճռական որոշումն էր առած: Տարակոյս չկար, որ իթթիհատակասներու եաթաղանը նոյնքան եւ ւաւելի սայրասուր էր, որքան Ապտիլ Համիտ Բ.-ի, որուն հարուածներուն զարհուրելիութիւնը դեռ կը յամենար մարդկանց յիշողութիւններուն մէջ:

Հնչակեան կուսակցութիւնը արդէն ձեռք էր բերած քաւակահին փորձառութիւն, անցած էր մարտական հրեղէն փուլերէ, ուներ յեղափոխական անցեալ եւ երբ իթթիհատակասներ հասան իշխանութեան, անոնք հետզհետէ սկսան ցոյց տալ, որ նոր դիմակներով եւ կարգախօսներով շարունակած՝ պիտի շարունակեն օսմանեան վաղեմի քաղաքականութիւնը առաւել վայրագութեամբ եւ առաւել կարողութեամբ: Հետեւաբար, երկու հանրապետութիւններուն բախումը անխուսափելի էր ու անթաքոյ:

Մեծն Փարսմազ եւ իր ընկերներ, անընկճելի ոգիով եւ նպատակասլաց քայլերով, պատրաստուած էին իրագործելու պատմական այն յանձնառութիւնը, որ ստանձնած էր Հնչակեան կուսակցութիւնը նախաեղեռնեան այդ բախտորոշ օրերուն: Հնչակեաններու մարտական դիրքորոշումն ու վարքագիծը տարօրինակ թուաք շատերու. անոնք այսպէսով անոնց որպէս խոշորարներ, տաք-գլուխներ, արկածախնդիրներ, որովհետեւ իթթիհատակասներով հմայուածներ մեղկացած էին անտարբերօրէն, կ'օրորուէին երգներու մէջ, չէին նախգար գայլին ոռնոց մահագոյժ, կ'ապրէին երջանկութեան եւ երանութեան ամպերու մէջ, զբաղած էին սեփական հաշիւներով, գոհ էին անհունապէս: Բայց... ոսոխը կը սողար անաղմուկ ճկունութեամբ եւ դարանակալ խորամանկութեամբ:

Օսմանեան դատարանը, Թալաթ փաշայի իսկ ցուցմունքներով, ծրագրած էր հնչակեաններու անճիտումը՝ հաւաքական կախաղանումով: Պոլսոյ Պայազիտի հրապարակին բարձուքէն, Քասնները տողանցեցին դէպի յաւերժութիւն: Անոնք, վեհ ու դիպուկ հայեցողներով, սերունդները ոգեւորեցին խանդաբորք պատգամներով: Անշնչացած ճօճուող մարմինները անոնց, դարձան մէյ-մէյ ներշնչարաններ գալիք շարքերուն համար, որոնց ակնարկելով բանաստեղծը հետագային գրեց՝ Պայազիտի բարձուքէն եւ վաղուան հունձըր տեսայ...

Պայազիտի բարձուքէն, սեզ ճակատներով, Քասնները վազին յարատեւութիւնը ողջունեցին՝ Արեւելի հորիզոնին վրայ պատկերելով ազատագրուած Հայաստանը: Անոնք շեփորեցին այն քսան հազարները, որոնք պիտի գան հայրենանուր փաղանգներով: Անոնց համար նահատակութիւնը նուիրումներուն գերագոյնն էր, որուն կրկնա հետեւիլ գաղափարականութեան բովէն անցած մարտիկները լոկ: Թուլակամութեան նշանները ժխտող գաղափարի ռաիփրաները դարձան վեհագոյն օրինակներ անոնց՝ որոնք հետագային պիտի հաւատային մարտական հակահարուածներուն, պիտի փարէին Հնչակեան կուսակցութեան հաւատոյ հանգանակին եւ յեղափոխական դրօշին: Ահա թէ ինչու անոնք բռնած էին յաւերժութեան ուղին:

Քասնները այն երդուեալ մարդիկն էին, որոնց գաղափարական դարձումը քայլերով կը յուշէր՝ «Փշրի՛ ժանտ շղթան, ծաղէ նոր արեւ»: Եւ անոնք անցնելով գործի, լծուեցան շղթաները փշրելու առաքելութեան: Առաքելութիւն՝ որ օժտուած էր անխախտ հաւատով, շքեղ տեսլականով եւ բոցեռանդ ոգիով: Մահուան սարսուռը չէր որ պիտի ընկճեր հնչակեանները, թալաթներու թունաթաթախ հրահանգները չէին որ պիտի ահաբեկէին Փարսմազն ու իր ընկերները: Անոնց պայքարին նպատակը հայրենիքի ազատ ու անկախ արեւն էր, շէնշո՛ղ արեւը:

Անոնք, անարդարօրէն, գրկուեցան տեսնելու հայրենիքի ազատութեան ալեծածան դրօշը: Կախաղաններու օղակներուն վրայ ընդհատեցաւ անոնց հաւաքական երազը: Քսան կենսախինդ սիրտեր դարձեցան բաբախելէ: Սակայն... յետնորդներ տեսան, ապրեցան եւ շօշափեցին փառահեղ մարմնաւորումը Քասններու տեսլականին: Ան կա՛յ այսօր՝ ի

Շարունակութիւնը տեսնել էջ 2

ՊԱՏԵՐԱԶՍԸ ԴԱԴՐԵՑՆՈՂ ՅՈՒՇԱԳԻՐ՝ 19 ՅՈՒՆԻՍԻՆ


Միջին Արեւելքի ժողովուրդները անհամբեր կը սպասեն Ուրբաթ, 19 Յունիս 2026-ին, երբ սկզբունքով ժընելի մէջ պիտի ստորագրուի աղետալի պատերազմը դադարեցնող համաձայնութիւնը Միացեալ Նահանգներու եւ Իրանի միջեւ: Կը կարծուի, թէ ամերիկեան կողմէն արարողութեան պիտի մասնակցի փոխնախագահ Ճէյ Տի Վենսը, իսկ Իրանի անունով պիտի ստորագրեն խորհրդարանի նախագահ Մոհամմատ Պաղէր Ղալիպաֆն ու արտաքին գործերու նախարար Ապպաս Արաղճին: Այս պիտի ըլլայ անցնող 47 տարիներու ամերիկեան-իրանեան ամենաբարձրաստիճան տեսակցութիւնը: Վենս կարծիք յայտնեց, որ գործարքը հնարաւորութիւն պիտի ստեղծէ միջինարեւելեան վերափոխումներու համար: Յուշագիրը պիտի անդրադառնայ Հորմուզի նեղուցի վերաբացումին, Իրանի նկատմամբ սահմանուած ամերիկեան պաշարումի վերացումին եւ հիլլեական թղթածրարին հարցով լուծումներու: Ստորագրութեան յաջորդած 60 օրերը պիտի յատկացուին Թեհրան-



Ուաշինկթըն յաւելեալ բանակցութիւններու՝ գտնելու համար հիլլեական թղթածրարին վերջնական լուծումներ: Փաքիստանի եւ Զաթարի միջնորդութեամբ համաձայնական եզրեր գտնելու մասին նախանցեալ օր յայտարարած էին Միացեալ Նահանգներու եւ Իրանի նախագահներն ու Փաքիստանի վարչապետը, հաւաստիացնելով որ գործարքը կը ներառէ նաեւ լիբանանեան ճակատին վրայ ընթացող ռազմական գործողութիւններու դադարեցում: Իրանի Արտաքին գործերու նախարարութիւնը շեշտեց, որ Լիբանանի մէջ պատերազմին աւարտը համաձայնութեան անցակտելի մասնիկն է, իսկ իսրայելեան բանակին ձայնասփիռ լայնացող հաղորդեց, որ Թրամի խոստացած է ապահովել Լիբանանի հարաւէն իսրայելեան բռնագրաւեալ ուժերուն նահանջը, սակայն ամերիկացի բարձրաստիճան պատասխանատու մը յստակացուց, որ հարաւէն իսրայելեան նահանջը Իրանի հետ համաձայնութիւնը կը նշուի նախապայման չէ, ւաւեցնելով որ Իսրայել ունի ինքնապաշտպանութեան իրաւունք, թէ յարձակումի ենթարկուի Հրճապալլայի կողմէ: Գործարքը արժանացաւ նաեւ իսրայելեան որոշակի դժգոհութեան: Պաշտպանութեան նախարար Իսրայել Քաջ պնդեց, որ իրենց կը մերժեն քաշուիլ լիբանանեան հողերէն, հակառակ արտաքին ճնշումին: Ելեմուտքի նախարար Պեզալէ Սմոթրիչ վատ որակեց Իրանի հետ ամերիկեան գործարքը, առաջարկելով որ Իսրայել առանձին շարունակէ Թեհրանի վարչակարգը տապալելու ջանքերը:

ԱՌԻՆ. «ԼԻԲԱՆԱՆՅԻՆԵՐԸ ՅՈՒՇԵՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԷՆ»

Ուաշինկթընի ու Թեհրանի միջեւ տակաւին պաշտօնապէս չկնքուած համաձայնութիւնը անմիջապէս ազդած է նաեւ Լիբանանի հարաւային շրջաններուն մէջ տիրող իրավիճակին վրայ: Հրճապալլայէն պատասխանատու մը «Ռոյթըրզ»-ին յայտնեց, թէ համաձայնութեան հրապարակումէն ետք Հրճապալլա գերծ մնացած է իսրայելացիներուն դէմ ռազմական գործողութիւններ ձեռնարկելէ, մինչ իսրայելեան լրատուամիջոցներ հաղորդեցին, որ դադարած են զինուորական գործողութիւնները եւ Լիբանանի մէջ ներթափանցելու փորձերը: Այսուհանդերձ, Հրճապալլա երկ երեկոյեան յայտարարեց, թէ կրակ բացած է իսրայելեան զինակառքերու ուղղութեամբ, որոնք կը փորձէին յառաջանալ Նապաթիի մերձակայ Բֆարթապիթ եւ Ալի Թահեր շրջաններուն ուղղութեամբ: Սահմանամերձ Սուր եւ Պընթ ժայլ գաւառներու քաղաքներուն եւ գիւղերուն քաղաքապետութիւնները գործի լծուեցան վերաբանալու այն բազմաթիւ ճամբաները, որոնք փակուած են ռազմական գործողութիւններուն հետեւանքով՝ դիրացնելու համար տեղահանուած տասնեակ հազարաւոր քաղաքա-



Շարունակութիւնը տեսնել էջ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԸՆՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՅԹԻ ԱԻԱՐՏ

Հայաստանի մէջ պաշտօնապէս տրուեցաւ խորհրդարանական ընտրութիւններուն փուլը եզրափակող ազդանշանը: Կերտնական ընտրական յանձնաժողովը 14 Յունիսին գումարուած ժողովին ընթացքին հրապարակեց 7 Յունիսին տեղի ունեցած ընտրութիւններուն պաշտօնական ու վերջնական արդիւնքները՝ շաբաթ մը շարունակուած վերահաշուարկներէն, բողոքներու ուսումնասիրութենէն եւ օրինական քննարկումներէն ետք, որոնք մեծ մասամբ կեդրոնացած էին «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ստացած քուէներուն հաշիւը պարզելու պարտաւորութեան վրայ, որովհետեւ այդպիսով պիտի յստականար Ազգային ժողով մուտք գործող ուժերուն ինքնութիւնը եւ իւրաքանչիւրին ստացած աթոռներուն թիւը: Յանձնաժողովի նախագահ Վահագն Յովակիմեան յայտնեց, որ Ազգային ժողով մուտք պիտի գործէ ընդամենը երեք ուժ՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի «Զաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը, որ տիրացած է 64 աթոռի (քուէներուն 49,7456 առ հարիւրը), Սամուէլ Կարապետեանի գլխաւորած «Ռուժիկ Հայաստան» դաշինքը խորհրդարան մուտք կը գործէ 29 երեսփոխաններով (քուէներուն 23,271 առ հարիւրը) եւ Ռուբէն Բոչարեանի գլխաւորած «Հայաստան» դաշինքը՝ 12 աթոռ (9,9231 տոկոս): Գազիկ Ծառուկեանի «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը ի վերջոյ չէ կրցած հասնել 4 առ հարիւրի նուազագոյն սահմանը եւ դուրս մնացած է Ազգային ժողովէն, ստանալով քուէներուն 3,9893 առ հարիւրը: Ուստի, նորընտիր Ազգային ժողովին մէջ «Զաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը պիտի կարենայ առանձին կազմել նոր կառավարութիւնը եւ 3/5-ի մեծամասնութեամբ հնարաւորութիւն ունի կայացնելու շարք մը որոշումներ, կատարելու նշանակումներ եւ պաշտօնազրկումներ, սակայն պիտի չկարենայ փոխել Սահմանադրութիւնը, որովհետեւ չէ կրցած հասնիլ 2/3-ի բացարձակ մեծամասնութեան:



ՀԱՅ-ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմէն Գիրգորեան, 14 Յունիսին, Դիլիջանի մէջ ընդունեց Ատրպէյճանի նախագահի օգնական Ջիմէթ Յաճիեւի գլխաւորած պատուիրակութիւնը: Աշխատանքային ժողովին ընթացքին հայկական ու ատրպէյճանական կողմերը քննարկեցին խաղաղութեան օրակարգին առնչուող հարցեր, ընդգծեցին երկխոսութիւնը շարունակելու անհրաժեշտութիւնը՝ յանուն տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան ամրապնդումին: Արժարձուեցաւ քաղաքա-

Շարունակութիւնը տեսնել էջ 2

ԶԱՅՆԵՐ ՅՈՒՆԱՍՏԱՆԷՆ

(արձագանգ հայկական կեանքի) - 1

ԹԵՍԱՂՈՒՆԻԿԷԻ համերգարահին մէջ, 30 Ապրիլին, հայ եւ յոյն հանդիսատեսներու ներկայութեան, հայրենի տաղանդաւոր դաշնակահար Հայկ Մելիքեան եւ յունահայ մենթրագուի Սիրան Չալըբեան միասնաբար տուած են դասական տիպի շա՛տ որակեալ համերգ մը, բեմին վրայ իրենց ետին ունենալով Թեսաղոնիկէի պետական սիմֆոնիկ բազմանդամ նուագախումբը, որ ղեկավարած է հանրայայտ խմբավար Ֆիլիփ Ֆորժէ: Յայտագիրը լեցուն եղած է հայ դասական եւ հոգեւոր երգերու յատկանշական ստեղծագործութիւններով: Ձեռնարկը ձօնուած է Մեծ Եղեռնի նահատակներու 111-ամեակի յիշատակին: Խորունկ տպաւորութիւն գործած են մանաւանդ Արամ Կապաբեանի յօրինումները: Իսկ երգչուհի Չալըբեանի մեկնաբանութիւնները առաւելաբար առանցք ունեցած են Հայոց Եկեղեցւոյ գմայելի շարականները:



ԱՌԵՆԵԻ քաղաքապետարանի սրահին մէջ, 10 Մայիսին, Յունաստանի Հայերու Միութիւնը զեղարուեստական ձեռնարկ մը սարքած է քաղաքապետարանին հետ գործակցաբար, «Մահուան յաղթած ժողովուրդը» ընդհանուր խորագրին տակ, առ ի ոգեւորում Մեծ Եղեռնի նահատակներուն: Ներկայ եղած են մեծ թիւով հայ եւ յոյն մշակութասէրներ, ի միջի այլոց՝ յոյն քաղաքականապետական շրջանակներու ներկայացուցիչներ: Հնչած են հայերէն երգեր, ներկայացուած են հայկական ազգային պարեր, հայ բանաստեղծներու գործերէն նմոշներ արտասանուած են յունարէն թարգմանութեամբ:

(Շարունակութիւնը տեսնել էջ 2)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂԱՂԱՍԵՐՆԵՐԸ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵԻ ԴԱԻԹԵԱՆ (Գամատա)

Եթանասուն տարի (1918-1988) կիսամեծ և կիսանկախ վիճակներ անցած և դառնություն ու գրկանք ճաշակած հայաստանցիներն են 1988-2018) եւս ալ իր անկախութիւնն ու ազատութիւնը շահագործող մարդոց անմիջապէս քննադատութիւնը» և «ազգասիրութիւնը» փորձել է ետք, ուզեց քալել ետեւէն անոր, որ, բոլորին պոռթկումը իմաստաւորելով, կրցաւ յաջողցնել յեղափոխութիւն մը, որ շատերու կողմէ անկարելի կը թուէր:

Եւ յետոյ, երեսուն տարուան ընթացքին յեղաշրջեալ «ազգասիրութիւն» և «հայրենասիրութիւն» կուտակած անհոգութիւնն ու անճարակութիւնը արդիւնաւորութեամբ ամօթալի պարտութեամբ մը եւ Արցախի կորուստով, բան մը, որուն համար պատասխանատու նկատուեցաւ նոր իշխանութիւնը, հինին կողմէ՝ «հողատու», «դաւաճան» և «օղու» անուանումներով որակուած:

Հիներուն ամբարտաւանութիւնը սակայն խրտչեցուց գիտակից և իրապաշտ մեծամասնութիւնը հայաստանցիին, որ չհաբուեցաւ երեսնամեակը և կաշաճ մնաց իր հանգիստ ապագան կերտող իշխանութեան մը հետ, որ խոստացաւ իրեն տալ խաղաղ ու բարգաւաճ ապագայ: Վստահեցաւ մարդոց, որոնք իրենց շահը մէկդի դրած, հակառակ նախկիններուն, գործեցին ընդհանուրին շահը նկատի ունենալով:



Ու եղան մարդիկ, որոնք կասկածի ենթարկեցին մտային կարողութիւնը այդ հայաստանցիին, որ, հակառակ պատերազմի պարտութեան և Արցախի դառն կորուստին, վերանորոգեց իր քուէով հաւատարմութիւն դաւանիլ ու վստահիլ ներկայ իշխանութեան:

2018 թուականի յեղափոխութենէ ետք իրապաշտութիւնը յաղթեց արկածախնդրութեան, եւ հայաստանցիին նախընտրեց հանգիստ քուն քաշել տանջալի երկար գիշերներէ ետք: Կար ժամանակ, երբ սփիւռքահայը յաճախ կը մեղադրէր հայաստանցի արտագաղթողը ու հայրենադաւ կը նկատէր զինք, առանց նկատի առնելու անոր ՄԱՐԴ-ԿԱՅԻՆ կարիքները, որոնք բնագոյաբար անելի սպառիչ եւ կարելու են ԱԶԳԱՅԻՆ պատկանելիութենէ: Սփիւռքահայը, օտար երկրի իր հանգիստ աթոռին վրայ նստած, հայրենասիրութեան դասեր կ'ուզէր տալ հայաստանցիին, որ գետնի վրայ սրտով ու մարմնով ինքն էր պաշտպանը հայրենիքին: Սփիւռքահայերէն ոմանք կարծեցին, թէ, հայրենիքի մէջ ունենալով տուն ու տեղ եւ կարճատեւ այցելութեամբ ու ներկայութեամբ, կրնային նոյնքան պարտավճար ըլլալ Հայաստանի, ինչպէս հոն գործող եւ ամէն օր ապրուստը ապահովող հայաստանցիին:

Ներկայ բոլոր տուեալները ցոյց կու տան, որ նախկին վիճակէն դուրս եկած է Հայաստան, արտագաղթը պակասած է, մուրացկանութիւնը դուրսի նկատմամբ վերջ գտած է, աշխարհի հետ իր յարգանքը պարտադրող քաղաքականութիւն հիմնուած է, եւ մեզի հանդէպ խոստումնադրուած եղող Ռուսիայէն կախեալութիւնը նուազած է:

Հայաստանի խաղաղասերները դրական նման տուեալներու հիման վրայ է, որ Յունիս 7-ի ընտրութիւններուն քուէարկեցին ի նպաստ իշխանութիւններուն՝ մօտաւորապէս յիսուն առ հարիւր (50%) համեմատութեամբ: Անոնց համար կարելու նկատուեցաւ հանգիստ եւ խաղաղ ապագայով մը ապրելու կարիքը. զօրաւոր թշնամիներով շրջապատուած ըլլալու գիտակցութիւնը իրապաշտ դարձուց զիրենք, եւ անոնց հետ գոյակցելու փորձառութիւնը որդեգրեցին Եւրոպայէ մը, որ անվերջ պատերազմներով յոգանած խաղաղութիւնը ընտրեց:

Սփիւռքահայը հաճոյքով պէտք է դիտէ հայաստանցիին կեանքի բարելաւումը եւ զբաղի իր սեփական գաղթական օճախը բարելաւելու գործով: Պէտք է, որ հոն ծաւալող

ՉԱՅՆԵՐ ՅՈՒՆԱՍՏԱՆԷՆ

(Շարունակուած էջ 1-էն)


ԱԹԵՆԵՒ մէջ, 17 Մայիսին, գումարուած է Հ.Բ.Ը.Միութեան տեղական մասնաճիւղի անդամական արտահերթ ժողովը, որ, իր կարգին, ընտրած ու յառաջացուցած է միութեան Յունաստանի Կեդրոնական յանձնաժողովը, հետեւեալ վարչական անդամներով՝ Գրիգոր Մարութեան (ատենապետ), Կարպիս Չաքալեան (փոխատենապետ), Լորան Մէնեստեան (ատենադպրոկի), Արա Կիրիւնեան (գանձապահ), Յովսէփ Լեպոյեան, Սարգիս Գրիման Մէնեստեան և Գրիգոր Չափարեան (խորհրդականներ):

ՏԻՏԻՍՏՈՒԹՅՈՒՆ (Թրակիա) հայոց Ս. Գեորգ եկեղեցի այցելած է, Մայիսի կէսին, Յունաստանի նախագահը՝ Զոնթակոս Թասուլաս, Թրակիոյ շրջանին տրուած ընկական այցելութեան մը ծիրին մէջ: Չինք դիմաւորած են գաղութի պատասխանատու վարիչները: Նախագահին ընկերակցեր են քաղաքապետն ու Էվրոս մարզի հնամեայ կոթողներու պահպանման պատասխանատուն: Ս. Գեորգ եկեղեցւոյ մասին պատմական տուեալներ լսելէ ետք, իր կարգին, նախագահ Թասուլաս դիտել տուած է որ Բիւզանդիոնի կայսրերէն Յովհաննէս Զանթաքուզիոս թագադրուած էր ա՛յս եկեղեցւոյ մէջ...: Կը նշուի, որ անցնող ամիսներուն մշակուած էր ծրագիր մը՝ այս պատմական եկեղեցին հիմնովին վերանորոգելու համար, եւ Յունաստանի մշակոյթի նախարարութիւնն է որ պատրաստակամութիւն յայտնած էր ստանձնելու այդ աշխատանքին նիւթական ամբողջ բեռը: Իսկ նախագահ Թասուլաս, եկեղեցիէն բաժնուելէ առաջ, կարեւորած է կրօնական բնոյթի գրաստանը խթանելով:




Նախագահ Թասուլաս (կենտրոն) բացատրութիւններ կը տանայ Կեդրոնի ծախսեր:

ԱԹԵՆԵՒ Համազգայինի «Արշալիր Գազանճեան» թատերախումբը, որ անցեալ եղանակին յունարեւոյ թմ բարձրագուցեր էր Մալխասի Նշանատր «Չարթօնք» վիպաշարին թատերականացած խտացեալ մէկ տարբերակը, այս տարի ալ վարագոր բացեր է հայերէնով երեք կարճ կատակերգութիւններու՝ միակ ներկայացման մը ընթացքին: Ներկայացումը տեղի ունեցեր է 17 Մայիսին, Զալիթեայի «Իգլա» թատերասրահին մէջ: Առաջին կատակերգութիւնը հանդիսացեր է ռուս գրագէտ Անտոն Չեխովի «Ամուսնութեան առաջափն»-ը, ուր դերեր ստանձնել են երեք հոգի՝ Ժանո Պարտագճեան, Անայիս Բարսեղեան և Նշան Սաւուլեան: Երկրորդ փիւթը դարձեալ ընտրուել է Չեխովէն. «Արջը»: Հոս ալ դերեր ստանձնել են Յակոբ Պարսամեան, Սառա Միսաքեան և Ժագ Տամատեան: Երրորդ ու վերջին գաւեշտը՝ Տիմիթիոս Փաթաթի «Կապոյտ կրիան» (յունարէնէ հայերէնի թարգմանութիւնը՝ Սարգիս Միւնասեանի), ներկայացուցեր է ութ դերասաններու մասնակցութեամբ, բեմին վրայ պարզելով քրքրելի երկխօսութիւններու ամբողջ շղթայ մը...: Երեք գաւեշտներն ալ բեմադրուել են Յակոբ Պարսամեանի ղեկավարութեամբ: «Ազատ Օր» իր առնչակից թղթակցութեան մէջ կը գանգատի սակայն հանդիսատեսներու ոչ-քաջակերպութիւնը: Ան նկատել կու տայ, որ մանաւանդ յունահայ երիտասարդ տարրին բացակայութիւնը հիասթափեցնող եղած է, ի հակադրութիւն պատանի ու երիտասարդ այն ափ մը դերակատարներուն, որոնք գնահատելի կարգաւորութիւն ցուցաբերած են հայ թատրոնին ու մեծ գոհողութեամբ երկար ամիսներ հետեւած են փորձերուն ու մարզուած:



Յայտարար «Արջ եկեղեցւոյ մասին»:

ՆԵՆՈ ԳՈՉՄՈՍԻ (Աթէնք) Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ, 15 Մայիսին, կատարուած է յուլարկաւորութիւնը յունահայ գաղութի հին սերունդի երեւելի ներկայացուցիչներէն մէկուն՝ տիկ. Մարո Օննիկեանի (ծնեալ՝ Մանուկեան): Ան իր աչքերը փակած է խոր ծերութեան մէջ, 97 տարեկանին: Մտաւորական ու մշակութային որոշ կազմաւորումի տեր, ողբացեալը երկար տարիներ մասյուն ներկայութիւն եղած է Աթէնքի հայ ազգային կեանքին մէջ, իր ամուսնոյ՝ Օննիկ Օննիկեանի հետ ուսուսի: Երիտասարդ հասակէն իսկ մաս կազմած է «Ազատ Օր»-ի շրջանակին՝ իրեն գրաշարուհի, վայելելով անմիջական շուքը թերթին յաջողակաւ խմբագիրներուն՝ Անտոն



Ողբացեալ Մարո Օննիկեան

Կազէին, Սեդրակ Գոհարունիին, Վազգէն Եսայեանին եւ Ահարոն Ստեփանեանին, չվարանելով նաեւ յօդուածներ ստորագրել մերթ ընդ մերթ: Ծառայած է Հայ Կապոյտ Խաչի ընտանիքին ալ, ինչպէս նաեւ Համազգայինի՝ թատերական ու գրական ներկայացումներու կալուածին մէջ: Կ'ըսուի, թէ վերջին տարիներուն ա՛լ կորսնցուցած էր իր տեսողութիւնը եւ անշուշտ՝ ֆիզիքապէս ալ տկարացած, սակայն կը պահանջէր որ իր շուրջիները ընթերցէին իրեն «Ազատ Օր»-ի թիւերը, որպէսզի գէթ լսովի հաղորդակից դառնար հայ մամուլի էջերուն...:

ԱԹԵՆԵՒ Ամերիկեան գլոյճի համերգասրահին մէջ, 15 Մայիսին, յունահայ դաշնակահարուհի Զրիստին Թոքաթեան եւ իր յուն արուեստակիցը՝ Էլէնա Խրիսթոսուլու, միասնաբար հանդէս եկած են դաշնամուրալին զուգակից համերգով մը: «Արդի մասնագիտութեան եղանակներ՝ երկուքի համար» խորագրեալ յայտագրին մէջ տեղ գտած են Շոսթաքովիչէն, Ալ. Յարութեանէն, Աննօ Բաբաջանեանէն, Մագիսէն, Պէնթթեն ու Կլասեն արդի յօրինումներ:



Դաշնակահարուհի Զ. Թոքաթեան


ԹԵՍՏԱՂՈՆԻԿԵՒ հայոց Ս. Աստուածածին եկեղեցի այցելած է, 18 Մայիսին, Յունաստանի արտաքին գործերու փոխնախարար Եաննիս Լուվերտոս և տեսակցութիւն ունեցած շրջանի հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ: Եկեղեցւոյ մուտքին, հիւրը դիմաւորուած է հովիւ Յ. Եղիայի, թաղականութեան ատենապետին եւ այլ ազգայիններու կողմէ, որոնք հակիրճ բացատրութիւններ տուած են աղօթատեղիին պատմութեան ու համայնքին այժմու գործունէութեան մասին: Յոյն նախարարը այցելած է նաեւ համայնքին շաբաթօրեայ վարժարանը եւ տեղեկութիւններ ստացած անոր վերաբերեալ: Նշեց, որ Թեսաղոնիկեի հայոց եկեղեցին բաւական հին կառոյց է, շինուած՝ 1903-ին, երբ քաղաքը կը գտնուէր օսմանեան տիրապետութեան տակ:



Յոյն նախարար «Արջ եկեղեցւոյ մասին»:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ տարբեր քաղաքներուն մէջ, Մայիսի կէտերուն, պետական ու հասարակական մակարդակի վրայ նշուած է պոնտացիներու (Պոնտոսի յոյներ) ցեղասպանութեան գոհերուն յիշատակը: Յունահայ համայնքն ալ իր գորակցութիւնը յայտնելով յունաց՝ պաշտօնական ներկայացուցիչներով մասնակից դարձած է այդ ոգեկոչումներուն: Այսպէս, 18 Մայիսին, Աթէնքի խորհրդարանի ծերակոյտի ժողովարարին մէջ կայացած յիշատակի ձեռնարկին ներկայ եղած ու խօսք առած է Հայ դատի յանձնախումբի ներկայացուցիչը՝ Յարութեան Սպարթալեան: Իր ուղերձին մէջ ան ակնարկած է Արցախի հայաթափումին: Նոյն առթիւ, Թեսաղոնիկեի ռազմական թանգարանին մէջ կայացած ակադեմիական նիստի մը՝ հայութեան անունով խօսք արտասանած է Յովիկ Գասապեան: Նիքեայի մէջ պոնտական միութիւններու սարքած ձեռնարկին ներկայ եղած է Գեորգ Աւագեան, իսկ Գաւալայի մէջ (Թրակիա) կազմակերպուած հաւաքին ալ հանդէս եկած է Հայ Գութեան Խաչի ներկայացուցիչը՝ Անոյշ Դաւիթեան:

ԹԵՍՏԱՂՈՆԻԿԵՒ հայոց եկեղեցւոյ «Տէր Չաքաբեան» սրահին մէջ, 28 Մայիսին, նշուած է Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան տօնը, նախաձեռնութեամբ Համազգայինի տեղւոյն մասնաճիւղին: Բացման խօսք արտասանած է Տիգրան Սարգիսեան: Գաղութի հոգեւոր հովիւը՝ Եղիա վրդ. Մալխասեան, յորդորած է գիտակցիլ անկախ հայրենիքի արժեքն ու նախաձեռնողի ըլլալ հայուն ինքնութեան պահպանութեան: Անկախութեան գաղափարին շուրջ մտորումներու ճամբով՝ կենդանի պատկեր մը մարմնաւորած են Տիգրան Պլեճեան եւ Յովիկ Գասապեան: Գաղութի «Կիլիկիա» պարախումբը գունաւորած է երեկոյթը, մինչ Մարիա Սփիրիտոսիտու հանդէս եկած է հայերէն երգերով: Այս բոլորին իրենց մասնակցութիւնը միացուցեր են նաեւ շաբաթօրեայ «Մալաքեան-Գասապարեան» ծաղկոցի երեխաները՝ սիրուն արտասանութիւններով: Ստեղծուած է ոգեւոր միջուկոր:



Մայիսեան տօնակարգին (Թեսաղոնիկե)

L. Շ.

Շարունակութիւնը տեսնել էջ 4

ՓՎՌ-Բ ԲԱԿՆՆԵՐՈՒՆ

Շարունակուած էջ 1-էն

հեճուկա իթթիհատականներու ցնորքին եւ փշոռուած իրճերուն:

Այսօր, ինչպէս շարքերը ամենուր, կը փառաւորեն Զսաններուն անթառամ յիշատակը: Անոնց յստակ պատգամները կը մնան գուրգուրանքի արժանի, ինչպէս՝ հայրենիքի հանդէպ անվերապահ սերը, գարափարի նկատմամբ անշահախնդիր մօտեցումը, յանուն ազգային հաւաքակցութեան՝ անսակարկ նուիրումը: Այս ամուսնով, մեր յոյսի եւ լոյսի մտասելեռումը կ'ուղղուի Հայաստանի հասցէին՝ միայն ու միայն: Զսան ռաիփրաններուն պարագլուխը՝ Փարամազ՝ Մեղրիէն մինչեւ Պայազիտի բարձունք լիաթոք գոռաց՝ ՀԱՅԱՍՏԱՆ-ի ինքնավարութիւն, անկախութիւն, ազատութիւն եւ ընկերային արդարութիւն:

Այսօր, վերանորոգելով մեր ուխտը Զսան երդուեալներուն անուսով, հաւաքաբար կը խոնարհիմք անոնց յիշատակին առջեւ, բամբ ծայնով կրկնելով՝

ՓՎՌԵ ԶԱՆՆԵՐՈՒՆ:

ԱՌԻՆ. «ԼԻԲԱՆԱՆՅԻՆԵՐԸ ՅՈՒՆԵՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԵՆ»

Շարունակուած էջ 1-էն

ցիններուն տունդարձը: Այսուհանդերձ, բանակը քաղաքացիներուն կըզ ուղղեց առայժմ գերծ մալու հարաւ վերադառնալէ եւ հետեւելու իր ցուցմունքներուն, թէեւ հարաւի մայրուղին երէկ ականատես դարձաւ վերադարձող ընտանիքներու խճողումին: Առողջապահութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ 2 Մարտին բռնկած պատերազմին հետեւանքով մահացածներուն թիւը հասած է 3798-ի, իսկ վիրաւորները՝ 11.781-ի: Միւս կողմէ, իսրայէլեան բանակը յայտարարեց, թէ Մարտի սկիզբը բռնկած առճակատումին ընթացքին կորսնցուցած է 30 սպայ եւ զինուոր, մինչ վիրաւորներուն թիւը հասած է 1347-ի:

Հանրապետութեան նախագահ ժողէֆ Աուն դիտել տուաւ, որ լիբանանցիները հոգնած են իրարայաջորդ պատերազմներէն եւ կը ձգտին պետութեան վերականգնումին ու փտածութեան դէմ պայքարին, որպէսզի կարենան ապրիլ բարեկեցիկ կեանք մը: Աուն դրուատեց Լիբանանի ներառումը տարածաշրջանային լուծումի յուշագրին մէջ, յիշեցնելով որ Լիբանանի կայունութիւնը անբաժան մասնիկն է տարածաշրջանային անվտանգութիւնը պահպանելու ջանքերուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԸՆՏՐԱԿԱՆ ՀՈՒՈՎՈՅԹԻ ԱՒԱՐՏ

Շարունակուած էջ 1-էն

ցիական հասարակութիւններուն միջեւ փոխադարձ վստահութեան ամրապնդումին հրամայականը: Աւարտին,



Գրիգորեան եւ Հաճիե որոշեցին շարունակել շփումները եւ յաջորդ անգամ տեսակցիլ Ատրպէյճանի մէջ: Գրիգորեան եւ Հաճիե միասին զբօսնեցան Դիլիջանի մէջ: Նոյն ծիրին մէջ, Ատրպէյճանի նախագահ Իլիւհամ Ալիեւ յայտնեց, որ իրենց քաղաքականութիւնը կը միտի երկարատեւ խաղաղութիւն եւ կայունութիւն հաստատել տարածաշրջանին մէջ:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՍԻՏՆԻԻ ՄԷՋ


Կազմակերպությանը Սիտնիի Նոր Սերունդ Մշակութային Սիուրթան, Ուրբաթ, 12 Յունիս 2026-ի երեկոյան, «West Ryde Community Hall» սրահին մէջ տեղի ունեցաւ հիւրաբար Սիտնիի այցելող «Արարատ» օրաթերթի տնօրէն ընկ. Նազարեթ Ճերեմեանի բանախօսութիւնը՝ «Միջին Արեւելքի հայկական գաղութներու ներկայ մարտահրաւերները եւ ապագայի հեռանկարները» խորագրին տակ:



Ձեռնարկին ներկայ էին Աւստրալիոյ Եւրո Չեյնստայի Յայոց թեմի Առաջնորդ գերշ. Տ. Վարդան եպս. Նաւասարդեան, Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ արժ. Տ. Աւետիս քնյ. Յամբարձումեան, Թեմական ժողովի ատենապետ Սարգիս Տեր Պետրոսեան, ՍԴՀԿ Աւստրալիոյ շրջանի Վարիչ մարմինի ատենապետ ընկ. Սեպուհ Գալփաքեան ու վարչական ընկերներ, Սիտնիի արուարձանային հայաշատ Ռայտի Նախկին քաղաքապետ Սարգիս Ետեյեան, քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Աւստրալիայէրու բազմութեան մը:



Բացման խօսքով հանդէս եկաւ ընկ. Անդրանիկ Կիւլվարդեան, որ Նշեց, թէ Միջին Արեւելքի անկայունութիւնը միշտ մտահոգութիւն կը յառաջացնէ այդ տարածաշրջանէն գաղթած հայորդիներուն մօտ: Նշելով, թէ շնորհիւ արհեստագիտական միջոցներու կարգաւորման, այսօր աւելի դիւրին է հետեւիլ հեռաւոր տարածաշրջանի կարգաւորմանը, ընկ. Կիւլվարդեան շեշտեց, որ ստոյգ տեղեկութիւններուն կարելի է լաւագոյն ծանօթանալ Միջին Արեւելքի մէջ գործող մտաւորականներուն հետ զրուցելով, որովհետեւ անոնք լաւատեղեակ են մարտահրաւերներուն եւ հեռանկարներուն: Ան ապա ներկայացուց հիւր բանախօսին կենսագրական գիծերը:



Ընկ. Նազարեթ Ճերեմեան Նախ խօսեցաւ միջինարեւելեան երկիրներու կազմութեան եւ հայկական համայնքներու կազմաւորման մասին, ապա անդրադարձաւ շարք մը գլխաւոր խնդիրներու: Միջին Արեւելքէն արտագաղթող եւ արեւելի ապահով շրջաններ, հայկական վարժարաններուն կարեւորութիւնը եւ անոնց թիւին անկումը՝ փակումով կամ միացումով, հայկական մամուլին դիմագրաւած խնդիրները՝ արհեստագիտական միջոցներու կարգաւորման եւ կարգաւորողներու թիւի անկումով, երիտասարդներու դիմագրաւած նիւթական խնդիրները, որոնց պատճառով կը դժուարանան ամուսնութիւնները, ինչպէս նաեւ Երուսաղէմի հայ համայնքի յատուկ պարագան ու գոյատեւելու հրամայականը: Որպէս լուծում, ան առաջարկեց կա՛մ հայրենադարձութիւն, որուն համար անհրաժեշտ է Հայաստանի իշխանութիւններուն գործակալան աջակցութիւնը, կա՛մ միջինարեւելեան համայնքներուն մէջ մնալու պարագային, իսկական միասնականութեամբ համախմբուած աշխատանք՝ յարթահարելու մարտահրաւերները եւ աւելի լաւ պայմաններ ստեղծելու հայութեան համար: Ան այս առումով առաջարկեց իրաքանչիւր համայնքի մէջ ստեղծել համայնքային խորհրդարան մը, որուն



Ընկ. Գալփաքեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին ու եկեղեցւոյ ծառայողներուն, ապա անդրադարձաւ Զատնէի խորհուրդին: «Որովհետեւ մահ իմացեալ՝ անմահութիւն է, Փարամազն ու ընկերները չմեռան, այլ մինչեւ օրս կ'ոգեշնչեն մեզ, կու տան գաղափարական եւ հայրենասիրական սնունդ, կը յորդորեն ինչպէ՛ս ոչինչ՝ յանուն ազգին ու հայրենիքին, միաժամանակ կառչած մնալով ազատութեան, արդարութեան եւ հաւասարութեան արժեքներուն», ըսաւ ընկ. Գալփաքեան, ապա մեծարեց շրջանի հնչակեան Նշեցեալ ընկեր-ընկերուհիներ Թադէս Պետրոսեանը, Վարդիվառ Տեմիրճեանը, Չաւեն Յաճեանը, Մինաս Բելէշեանը, Մովսէս Վարդիքեանը, Յովսէփ Նաթարեանը, Արթին Փոլատեանը, Գրիգոր Սվազեանը, Սիրուն Չիլինկիրեանը, Կարպիս Ապեճեանը, Վաչէ Չիլինկիրեանն ու Յովհաննէս Տեմիրճեանը, որոնք գործունէա՛յ մասնակցութիւն ունեցած են Աւստրալիոյ Հնչակեան կառոյցը հիմնելու եւ ծաղկեցնելու առաքելութեան մէջ:

Միջին Արեւելքի անկայունութիւնը միշտ մտահոգութիւն կը յառաջացնէ այդ տարածաշրջանէն գաղթած հայորդիներուն մօտ: Նշելով, թէ շնորհիւ արհեստագիտական միջոցներու կարգաւորման, այսօր աւելի դիւրին է հետեւիլ հեռաւոր տարածաշրջանի կարգաւորմանը, ընկ. Կիւլվարդեան շեշտեց, որ ստոյգ տեղեկութիւններուն կարելի է լաւագոյն ծանօթանալ Միջին Արեւելքի մէջ գործող մտաւորականներուն հետ զրուցելով, որովհետեւ անոնք լաւատեղեակ են մարտահրաւերներուն եւ հեռանկարներուն: Ան ապա ներկայացուց հիւր բանախօսին կենսագրական գիծերը:



մաս կը կազմեն կուսակցութիւնները, միութիւնները եւ երեք յարանուանութիւնները, ուր վերջինի իրաւունք կը տրուի բոլորին եւ այնտեղ կը կայացուին համայնքային կարեւոր որոշումները:

ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՍԻՏՆԻԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Աւստրալիոյ Վարիչ մարմինին, Աւստրալիայի Կիրակի, 14 Յունիս 2026-ին, Նշեց Հնչակեան Զատնէի կախաղաններուն եւ Աւստրալիոյ շրջանի Նշեցեալ ընկեր-ընկերուհիներուն յիշատակը:

Առաւօտեան Սիտնիի մէջ մատուցուեցաւ հոգեհանգստեան արարողութիւն եւ յիշատակի հաւաք: Առաջնորդանիստ Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ մէջ Սուրբ եւ Անմահ Պատարագին եւ հոգեհանգստեան արարողութեան հանդիսապետեց Աւստրալիոյ եւ Նոր Չեյնստայի Յայոց թեմի Առաջնորդ գերշ. Տ. Վարդան եպս. Նաւասարդեան, ներկայութեամբ ՍԴՀԿ Աւստրալիոյ Վարիչ մարմինի ատենապետ ընկ. Սեպուհ Գալփաքեանի եւ Վարիչ մարմինի անդամներուն, հնչակեաններու եւ բազմաթիւ Աւստրալիայէրու:

Պատարագեց Տ. Աւետիս քնյ. Յամբարձումեան, ապա յաւուր պատշաճի քարոզեց Առաջնորդ սրբազանը, որ կեդրոնացաւ Զատնէի նահատակութեան խորհուրդին վրայ: «Զատնէրը Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ գիտակից կերպով նահատակուեցան, որովհետեւ կառչած մնացին իրենց արժեքներուն եւ հաւատացին, որ իրենց մարմինը կրնան սպաննել, բայց իրենց պիտի յաջորդեն չառ քսան հազարներ՝ ապրելով վերակենդանացնելու իրենց արժեքը եւ պանծացնելու իրենց յիշատակը», Նշեց Առաջնորդ Սրբազանը: Ան աղօթք բարձրացուց նաեւ «այս հնազանդ կուսակցութեան բոլոր հիմնադիրներու եւ հերոս հայորդիներուն համար, որոնք երազած են մեր հայրենիքին ներկայ եւ վաղուայ փայլուն օրը»: Ան աղօթելով մաղթեց, որ կարելի ըլլայ տեսնել մեր հայրենիք Հայաստանի յաղթական եւ փառապանծ հորիզոնները:



Հոգեհանգստեան արարողութիւնէն անմիջապէս ետք, եկեղեցւոյ «Էտկարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ յիշատակի հաւաք, ներկայութեամբ Առաջնորդ Սրբազանին եւ քահանայ հայրերուն, Թեմական խորհուրդի ատենապետ Սարգիս Տեր Պետրոսեանին, փոխատենապետ տղջ. Ստեփան Գրգեաշարեանին եւ խորհուրդի անդամ Գեորգ Չափրագեանին, Ս. Յարութեան եկեղեցւոյ վարչութեան ատենապետ Արա Գոփուշեանին եւ վարչակազմներու, ՍԴՀԿ Վարիչ մարմինի ատենապետին ու անդամներուն, յարակից կառոյցներու վարչութիւններուն, Աւստրալիայի անձնաւորութիւններու եւ հիւրերու:

Ընկ. Գալփաքեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին ու եկեղեցւոյ ծառայողներուն, ապա անդրադարձաւ Զատնէի խորհուրդին: «Որովհետեւ մահ իմացեալ՝ անմահութիւն է, Փարամազն ու ընկերները չմեռան, այլ մինչեւ օրս կ'ոգեշնչեն մեզ, կու տան գաղափարական եւ հայրենասիրական սնունդ, կը յորդորեն ինչպէ՛ս ոչինչ՝ յանուն ազգին ու հայրենիքին, միաժամանակ կառչած մնալով ազատութեան, արդարութեան եւ հաւասարութեան արժեքներուն», ըսաւ ընկ. Գալփաքեան, ապա մեծարեց շրջանի հնչակեան Նշեցեալ ընկեր-ընկերուհիներ Թադէս Պետրոսեանը, Վարդիվառ Տեմիրճեանը, Չաւեն Յաճեանը, Մինաս Բելէշեանը, Մովսէս Վարդիքեանը, Յովսէփ Նաթարեանը, Արթին Փոլատեանը, Գրիգոր Սվազեանը, Սիրուն Չիլինկիրեանը, Կարպիս Ապեճեանը, Վաչէ Չիլինկիրեանն ու Յովհաննէս Տեմիրճեանը, որոնք գործունէա՛յ մասնակցութիւն ունեցած են Աւստրալիոյ Հնչակեան կառոյցը հիմնելու եւ ծաղկեցնելու առաքելութեան մէջ:



Օրուան պատգամը փոխանցեց հիւրաբար Սիտնի գտնուող՝ «Արարատ» օրաթերթի տնօրէն ընկ. Նազարեթ Ճերեմեան: (խօսքը ամբողջութեամբ կը ներկայացնենք առանձին)



Փակման խօսքով հանդէս եկաւ Առաջնորդ սրբազանը, որ կոչ ուղղեց շարունակելու պահելու, պահպանելու եւ փոխանցելու մեր ազգին յաւերժութեան գաղտնիքը պարունակող գաղափարները, առաջարկելով որ իւրաքանչիւր հայորդի ազգի գոհասեղանին վրայ դնէ իր նուագագոյն կարելի՛ն ժամանակը եւ նիւթական կարողութիւնը: Ան ապա օրինեց հոգեճաշը, որ սարքուած էր նահատակներու եւ Նշեցեալներու հոգիներու յիշատակին: Այսպէս, Սիտնիի հայ համայնքը արժանաւայել կերպով ոգեկոչեց Զատնէի անմահներու նահատակութեան 111-րդ տարելիքը՝ վերանորոգելով իր հաւատարմութիւնը անոնց կտակին եւ ազգային ծառայութեան սրբազան ուղիին:

«ԱՐԱՐԱՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ՏՆՕՐԷՆ ՆԱԶՕ ԵՐԵՄԵԱՆԻ ԽՕՍՔԸ ՔՍԱՆՆԵՐՈՒՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ՝ ՈՒՆՏԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՒ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՒԱՏՔ

Այսօր աշխարհասփիւռ հնչակեան գաղափարական եւ համակրական շրջանակները եկեղեցական արարողութիւններով ու քաղաքական ձեռնարկներով կ'ոգեկոչեն Հնչակեան կուսակցութեան քսան նահատակ գործիչներուն յիշատակը: Անոնք, 111 տարի առաջ, Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ, կախաղանի առջեւ կանգնած, անտեսելով մահը, ազատ ու ինքնիշխան Հայաստանի տեսիլը կը հռչակէին:



1915 թուականի Յունիս 15-ի արշալոյսին, քսան հայ յեղափոխականներ վերջին անգամ ողջունեցին արեւածագը: Սակայն անոնց պատգամը դարձաւ պայքարի, դիմադրութեան եւ ազգային վերածնունդի կոչ՝ ուղղուած գալիք սերունդներուն: Ինչպէս բանաստեղծը պիտի ըսէր՝ «Պայազիտի բարձունքն եւ վաղուան հունձըը տեսայ»:

Հնչակեաններուն համար Զատնէի յիշատակի ոգեկոչումը ուխտի վերանորոգում է եւ մենք կը խոնարհիլք անոնց յիշատակին, որովհետեւ անոնք ունէին յստակ քաղաքական տեսլական, ազգային ճշգրիտ կողմնորոշում եւ սկզբունքներու նկատմամբ անսակարկ հաւատարմութիւն: Անոնք չխաբուեցան Օսմանեան իշխանութիւններու խտրամտմանով, չզայթակեցան պաշտօններով կամ անցողիկ շահերով եւ չշեղեցան իրենց ուղիէն: Այն օրերուն, երբ շատեր տակաւին կը հաւատային Իթթիհատի գեղեցիկ խօսքերուն, Զատնէրը արդէն տեսած էին անոր իրական դիմագիծը:

Անոնք հեռատեսութեամբ ըմբռնեցին Օսմանեան պետութեան ցեղապաշտ եւ հայաջինջ ծրագրերը եւ ահազանգեցին հայ ժողովուրդը: 1913-ի Սեպտեմբերին, Կոստանայի տօթերորդ համագումարին, անոնք ընդունեցին պատմական որոշում մը՝ դիմադրելու Իթթիհատի ոճրագործ ղեկավարութեան եւ կանխելու հայ ժողովուրդին դէմ պատրաստուող աղէտը: Ամեն տարի կը յիշենք զանոնք, քանի որ, Փարամազի առաջնորդութեամբ, անոնք ընտրեցին ճշմարտութիւնը՝ կենսաբան վեր դասելով ազգային պարտականութիւնը:

Փարամազն ու իր ընկերները, Պայազիտի բարձունքէն, մարգարեական տեսիլքով կը նայէին դէպի ապագայ: Անոնք կը տեսնէին այն Հայաստանը, որ տակաւին գոյութիւն չունէր, բայց որուն ծնունդին կը հաւատային անասան համոզումով: Երեք տարի անց, Սարգարապատի հերոսամարտով եւ Հայաստանի Հանրապետութեան հռչակումով, անոնց տեսիլքը իրականութիւն դարձաւ:

Ամեն տարի, Զատնէի յիշատակը ոգեկոչելով, մենք կը նորոգենք մեր ուխտը՝ հաւատալու, որ Արեւելքի հորիզոնին վրայ յառնած հայրենիքը պիտի մնայ կանգուն ու ամուր:

Այսօր Զատնէի կտակը մեզ կը հրաւիրէ համախմբուելու հայրենիքի շուրջ, պահպանելու եւ քարոզելու այն պետականութիւնը, որուն համար պայքարեցան եւ զոհուեցան սերունդներ: Անոնք երազը ազատ, անկախ, ինքնիշխան եւ խաղաղ Հայաստանն էր: Այդ երազը այսօր իրականութիւն դարձած է եւ անոր հզօրացումն ու բարգաւաճումը մեր եւ գալիք սերունդներու պատասխանատուութիւնն է:

Յաւ ի սիրտ, աշխարհի տարբեր անկիւններու մէջ տակաւին կը շարունակուին պատերազմները, բռնութիւններն ու ատելութեան դրսեւորումները: Մինչդէռ հնչակեան ընկերվարական գաղափարախօսութիւնը իր ետեւում կառչած է խաղաղութեան, ժողովուրդներու համագործակցութեան եւ մարդկային համերաշխութեան սկզբունքներուն:

Իսկ խաղաղութեան կառչիլ չի նշանակել մոռնալ մեր 111-ամեայ պայքարը, չի նշանակել մոռնալ Արեւմտեան Հայաստանը, Կիլիկիան եւ Արցախը: Ընդհակառակը, այսօր խաղաղութեան կառչիլը կը պահանջէ դարու Նոր մտածողութիւն եւ Նոր ռազմավարութիւն:

Մօտ երեսուն տարի սպասեցինք, որ գթք մէկ պետութիւն ճանչնայ մեծ գոհողութիւններու գնով ազատագրուած Արցախի Հանրապետութեան անկախութիւնը: Յաւոք, այդ չկատարուեցաւ: Միեւնոյն ժամանակ, թշնամիին համբերութեամբ եւ հետեւողականութեամբ կը պատրաստուէր, սպասելով յարմար պահուն՝ հայաթափելու հայկական Արցախը: Երբ տարածաշրջանային կարգաւորմանն ու արդիական ռազմական արհեստագիտութիւնը նպաստաւոր դարձան իրեն, ան իրագործեց իր նպատակը:

Այո՛, մենք կորսնցուցինք Արցախը, որովհետեւ չունէինք այն քաղաքական եւ դիւանագիտական խաղաքարտերը, որոնք միջոցով կարելի պիտի ըլլար ապահովել արտաքին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂԱՂԱՍԵՐՆԵՐԸ

Շարունակում էջ 2-էն

գիտական և տնտեսական զարգացումներուն մէջ տեսնել իր ցեղասպանուած ժողովուրդին դարաւոր երագած նախանձելի վերածնունդը:

Յայ սփիւռքը օրինակ պէտք է ամէն Թորոնթոյի մէջ մշակուող և գարգացող բարեշքումներէն, որոնք օրինակելի կը դարձնեն այս փոքրաթիւ գաղութը իր կարող հոգատարներով: Յայ Կեդրոնի շրջանակը, իր հոգատարութեան տակ գործող դարոցի աշակերտութեան ծաւալող թիւը նկատի ունենալով, վերջերս խիզախ քայլով մը գնեց մօտաւորապէս 16 միլիոն արժէք ունեցող շէնք մը իր մօտակալքը՝ Երկրորդական վարժարանի իր աշակերտութեան տեղ տրամադրելու համար: Նմանապէս, Թորոնթոյի հայ գաղութին պատիւ բերող ձեռնարկով մը տեղույս Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ շրջանակը աշխուժօրէն կը ծրագրէ շինել բազմամիլիոն գումարներով կանգնեցուելիք հայ երեցներու համար տուն մը իր յարակից բազմաթիւ շէնք(եր)ով:

Միջին Արեւելքի հայաիւր զարգացումը հայաթափումը ցաւալի ըլլալով հանդերձ, միախառնական է տեսնել նոր եկուորներով հարստացումը Գանատայի, Ամերիկայի, Ֆրանսայի և Աւստրալիոյ հայկական գաղութներուն: Կար ժամանակ, երբ Լիբանանի հայութիւնը երկրի քաղաքացիական կռիւներուն պատճառով կը լքէր իր ծննդավայրը արցունքոտ աչքերով: Նոյն ճակատագրին ենթարկուեցան սուրիահայերը և իրաքահայերը՝ լքելով իրենց շատ սիրած ծննդավայրերը: Մեղաւոր էին արդեօք անոնք, որոնք իրենց գաւակներուն ապագան նկատի առնելով լքեցին տուն ու տեղ՝ ճաշակելով մրուրը գաղթականութեան...:

Յոս արդար է հարց տալ նաեւ, թէ մեղաւոր են արդեօք հայաստանցի խաղաղասէրները, որոնք «դաւաճան», «հողատու» և դեռ որքան գէշ որակում կը ստանան «հայրենասիրութիւն» դաւանողներու կողմէ, պարզապէս որովհետեւ կը ցանկան ապրիլ հանգիստ ու խաղաղ՝ իրենց գաւակներուն փայլուն ապագայ մը երագելով:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՆ...

Շարունակում էջ 3-էն

Գեղարուեստական բաժնով, արուեստագիտուի տիկ. Այտա Աւետիսեան մեկնաբանեց «Մախմուր Աղջիկ» եւ «Պալէնի» երգերը, իսկ տիկ. Չանի Նազարեան Օգճեան ասմունքեց Գեորգ Էմիլի «Մենք»-ը:

Աւարտին, Առաջնորդ սրբազան հայրը հանդէս եկաւ սրտի խօսքով, որուն մէջ նշեց, թէ Միջին Արեւելքի համայնքներէն հայերու Աւստրալիա գաղթը ունի թէ՛ ժխտական, թէ՛ դրական երեսներ, որովհետեւ նօսրացած են շարք մը համայնքներ, սակայն միւս կողմէ Աւստրալիոյ համայնքը հարստացած է զարգացած, կարող և գործունէ այն տնտեսարկ ուժերով, որոնք այնտեղ կը շարունակեն միջինարեւելեան համայնքներուն մէջ իրենց սկսած ազգային ծառայութիւնը:



Տեր Վարդան եպ. Նաւասարդեանի «Պահպանիչ»-էն ետք, ՍԳԿԿ Աւստրալիոյ Վարիչ մարմինի ատենապետն ու ներկաները անակնկալ մատուցեցին Առաջնորդ սրբազանին՝ Աւստրալիոյ մէջ իր ծառայութեան ամառին ամեակին առթիւ: Ընկ. Գալփաքեան հակիրճ խօսքով շնորհարարեց Առաջնորդ սրբազանը եւ դրուատեց անոր գործունէութիւնը, ապա պաշտօնական անձնաւորութիւններ հաստեցին այդ առթիւ պատրաստուած կարկանդակը:

Ձեռնարկը փակուեցաւ «Սարդարապատ»-ի յաղթերգով՝ կատարողութեամբ բոլոր ներկաներուն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսուհետեւ կրնաք օգտուիլ Առողջապահական Ապահովագրութենէն (Medical Health Insurance) մեր դարմանատան միջոցով սերտուած գիներով ինչպէս նաեւ վճարումի դիւրութիւններով:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 01/560 704 եւ 71/356 035

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com email: araradoratert@gmail.com

ارارات جريدة يومية عربية تصدر عن شركة ماسيسر للمباعة والنشر (ش.م.م.)

ՔՍԱՆՆԵՐՈՒՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ...

Շարունակում էջ 3-էն

ազդեցիկ աջակցութիւն: Աւելին, նոյնիսկ մեր «դարաւոր դաշնակիցը» վճարող պահուն մեզ միւսակ ձգեց՝ արցախահայութիւնը յանձնելով իր ճակատագրին:

Անդին նոյն մեր դարաւոր դաշնակիցը, երբ տարիէ ի վեր չի յաջողիր ծունկի բերել ռազմականօրէն իրմէ բազմապատիկ անգամ աւելի թոյլ Ուքրանիան: Ինչո՞ւ: Որովհետեւ ամբողջ Արեւմուտքը ռազմական, տնտեսական եւ քաղաքական օժանդակութեամբ կանգնած է Ուքրանիոյ կողքին: Նմանօրինակ պատկեր կը տեսնենք նաեւ Իրանի պարագային, որ իր դիմադրողականութիւնը կը պահպանէ Ռուսիոյ կամ Չինաստանի աջակցութեամբ:

Ահա թէ որոնք են ժամանակակից աշխարհին մէջ յաջողութեան իրական խաղաքարտերը: Մինչդեռ մենք 25 տարիներէ ստիպուած կորսնցուցած էինք մեր խաղաքարտերը՝ ինքնախաբէական վստահութիւններու եւ քաղաքական քնաբեր պատրանքներու հետեւանքով:

Այսօր Յայաստանի Յանրապետութիւնը, ըմբռնելով միջազգային նոր իրողութիւններն ու քաղաքական խաղի կանոնները, կը փորձէ վերատիրանալ այդ խաղաքարտերուն եւ վերադառնալ աւելի իրապաշտ քաղաքականութեան ուղի: Բնականաբար, պետական քաղաքականութեան բոլոր քայլերը չեն իրապարակուիր կամ բացայայտուիր: Անցեալ Մայիս 28-ին, Երեւանի գլխաւոր իրապարակին վրայ տեղի ունեցած զօրահանդէսը գլխաւոր ապացոյցն է մեր ներկայացուցած վարկածին:

Մեզի կը մնայ վստահիլ հայրենի պետականութեան եւ ժողովուրդին ընտրած իշխանութիւններուն, որոնք արդէն 3-րդ անգամն է որ խորհրդարանական ընտրութիւններով շահած են հայրենի ժողովուրդին վստահութիւնը, կանգնիլ անոր կողքին եւ թոյլ չտալ ներքին պառակտումներու խորացումը:

Արեւմտեան Յայաստանի, Կիլիկիոյ եւ Արցախի նկատմամբ մեր պատմական իրաւունքներուն տեղը մենք ենք, եւ աշխարհի չորս ծագերուն ապրող հայութիւնը երբեք չի կրնար իրաժարիլ այդ իրաւունքներէն: Սակայն այդ իրաւունքներուն հետապնդումը կը պահանջէ խոհեմութիւն, համբերութիւն եւ միջազգային իրողութիւններու ճիշդ գնահատում: Անոնք պէտք է ծառայեցուին ոչ թէ զգացական պոռթկումներու, այլ դիւանազիտական եւ քաղաքական լաւագոյն ռազմավարութեան:

Ներկայ իշխանութիւնները անվերջ քարկոծելը, ամէն հարցի մէջ դաւաճանութիւն որոնելը եւ ոչ-շինիչ գործելակերպը կրնայ աւելի խորացնել հայրենիքի քաղաքական ու տնտեսական խնդիրները, իսկ Սփիւռքը, որ արդէն կը դիմագրաւէ նօսրացման եւ ձուլման մարտահրաւերները, կրնայ աւելի տկարանալ:

Մենք չենք մոռցած Արեւմտեան Յայաստանը, Կիլիկիան եւ Արցախը: Անոնք անբաժանելի մասն են մեր ազգային ինքնութեան եւ մեր հաւաքական գիտակցութեան: Բայց այսօր առաջնահերթութիւնը ուժեղ հայրենիք կառուցելն է, որպէսզի յարմար պահուն կարենանք օգտուիլ պատմութեան ընձեռած հնարաւորութիւններէ:

Իսկ եթէ անմիաբանութեան, փոքրիկութեան և ներքին պայքարներու պատճառով կորսնցնենք նաեւ այդ ապագայ հնարաւորութիւնը, այն ատեն հետեւանքները կրնան իսկապէս ճակատագրական ըլլալ մեր հայրենիքին համար:

Յայաստանը այսօր կը շարունակէ այն ուղին, որուն համար պայքարեցան եւ զոհաբերուեցան ազգային-ազատագրական պայքարի բազմաթիւ հերոսներ, որոնք շարքին էին նաեւ Զսանները: Անոնց տեսլականը ազատ, անկախ, խաղաղ եւ ինքնիշխան Յայաստանն էր: Տասնամեակներու պայքարէ ու զոհողութիւններէ ետք այդ երագը իրականութիւն դարձաւ:

Յայրութեան կէտ նպատակը, այսօր, պէտք է ըլլայ մէկ բան՝ հզօրացնել հայրենիքը, պահպանել եւ գուրգուրալ այն՝ ինչ որ ունինք: Այս էր պատգամը անցեալին, պատգամը՝ այսօրուան եւ վաղուան:

Եթէ Զսանները իրաջքով այսօր մեր մէջ գտնուէին, վստահաբար անոնց պատգամը նոյնը պիտի մնար՝ հզօրացնել հայրենիքը, պահպանել խաղաղութիւնը, ամրապնդել ազգային միասնութիւնը եւ հաւատարմ Յայաստանի ապագային:

Յիշատակը անթառամ մնայ Աւստրալիոյ հանգուցեալ մեր երեց սերունդի ընկեր-ընկերուհիներուն:

Փա՛ռք Զսան անմահներուն, եւ փա՛ռք այն գաղափարական բազմինին՝ Սոցիալ Դեմոկրատ Յնչալեան Կուսակցութեան, որուն ծառայեցին անոնք:

Սոցիալ Դեմոկրատ Յնչալեան Կուսակցութիւն

ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԻ ՎԱՐՈՉ ՄԱՐՄԻՆ

ՀՆՉԱԿԵԱՆ ԵՆՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ

ԽՕՍԸ ԿՄՈՒՆԵՆ՝

ԸՆԿԵՐ ԱԼԵԿՍԱՆՔ ԲԷՕԾԿԷՐԵԱՆ
Ս.Գ.Հ.Կ. ԿԵՂՈՐՆԱԿԱՆ ՎԱՐՈՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ

ԸՆԿԵՐ ՎԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
Ս.Գ.Հ.Կ. ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԻ ՎԱՐՈՉ ՄԱՐՄԻՆ ԱՏԵՆԱԴԵՏ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 19 Յունիս 2026-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Սին Էլ Ֆիլի քաղաքապետարանի սրահին մէջ:

ԳՐԱԲԵՐ

ՏՈՔԹ. ՄԿՐՏԻՉ ՊԵՏՐՈՍԵԱՆ ԱՆՎԵՐԱԴԱՐՁ ՄԵԿՆԵՑԱԿ



Անհաւատալի եւ խոր վիշտ պատճառով քօթ մը կայծակի արագութեամբ տարածուեցաւ ընկերային ցանցերու էջերուն վրայ: Յաւերժութեան ճամբան բռնած էր մեր բոլորին սիրելի բժիշկը՝ **տոքթ. Մկրտիչ Պետրոսեանը:**

Դժուար է հաւատալ, որ այն մարդը, որ մինչեւ մօտիկ անցեալին բժշկական պայուսակը ձեռքին, ոտքի թեթեւ կարգացումով, իր յատուկ համեստութեամբ ու նուիրումով կը շրջէր Յաճընէն մինչեւ Պուրճ Յամուտ, Սին Էլ Ֆիլէն մինչեւ Ազունիէի առողջարան, այլեւս ոչ եւս է:

Տոքթ. Պետրոսեան երբեք չէր սահմանափակուեր միայն իր մասնագիտութեամբ: Ան իր թանկարժէք ժամանակէն մաս մը առատօրէն կը նուիրէր ազգային եւ հասարակական կեանքին: Երբեմն զինք կը տեսնէինք ՅԿԲՄ-ի Սահակեան գոլէճի խնամակալութեան ատենապետի պատասխանատու պաշտօնին, իսկ երբեմն՝ Սոցիալ Դեմոկրատ Յնչալեան Կուսակցութեան Վարիչ մարմինին եւ յարակից կառոյցներուն մէջ, միշտ պատրաստ ծառայելու իր ժողովուրդին ու իր գաղափարներուն: Յայաստանի բժշկական համալսարանի շրջանաւարտ տոքթ. Մկրտիչ Պետրոսեան, Լիբանան վերադառնալէ ետք, մինչեւ իր կեանքի վերջին օրերը մնաց ազգին, համայնքին եւ կուսակցութեան ծառայութեան բարձր գիտակցութեամբ ապրող ու գործող անհատ մը: Ան իր կեանքով մարմնաւորեց ծառայութեան, նուիրումի եւ պատասխանատուութեան այն արժէքները, որոնք զինք սիրելի եւ յարգելի դարձուցին բոլոր անոնց համար, որոնք առիթ ունեցած էին ճանչնալու զինք:

Վերջին տարիներուն ան հաստատուած էր Միացեալ Նահանգներ, ուր ալ իր երկրային կեանքի վերջին հանգրուանին հասնելով՝ խաղաղութեամբ աւանդեց իր հոգին:

Այս առիթով, «Արարատ» խորին վշտակցութիւն կը յայտնէ հանգուցեալ տոքթ. Մկրտիչ Պետրոսեանի այրիին եւ հարազատներուն:

ԳՈՅԺ

Ս.Գ.Հ.Կ. Լիբանանի շրջանի Վարիչ մարմինը կը գումբէ երկար տարիներու շրջանի Վարիչ մարմինի անդամ, հաւատաւոր կուսակցական եւ նուիրեալ գաղափարական ընկերներէն

տոքթ. ՄԿՐՏԻՉ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ մահը:

Յ.Կ.Բ.Մ.-ի Լիբանանի վարչութիւնը կը գումբէ Յ.Կ.Բ.Մ.-ի Սահակեան-Լեւոն Մկրտիչեան գոլէճի խնամակալութեան երկար տարիներու երբեմնի ատենապետ **տոքթ. ՄԿՐՏԻՉ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ** մահը, որ պատահեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ:

ԳՈՅԺ

Լիբանանահայ Բժշկական Միութեան վարչութիւնը կը գումբէ իր նախկին վարչականներէն

Տոքթ. ՄԿՐՏԻՉ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Միացեալ Նահանգներու մէջ, Ըաբաթ, 13 Յունիս 2026-ին:

ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ԲԾԾԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՈՉՈՒԹԻՆ

ՄԱԿԱՉԴ

Ազունիէի Յայ Ազգային բուժարանի հնամալ կալուածները եւ Տնօրէնութիւնը սրտի խորին կսկիծով կը գումբեն բուժարանի երկար տարիներու բժշկապետ

Տոքթ. ՄԿՐՏԻՉ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ Ըաբաթ, 13 Յունիս 2026-ին, Միացեալ Նահանգներու մէջ:

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ Ազունիէի Յայ Ազգային Բուժարանի

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ընկեր տոքթ. ՄԿՐՏԻՉ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ մահուն տխուր առիթով, ՍԳԿԿ «Աղասի» մասնաճիւղի վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ գաղափարի ընկերներուն: